# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

*Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը 1950 թվականից սկսած հրատարակել է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանին պատկանող ձեռագրատան մատյանների ցուցակը յոթ հերթով.*

| | |
|---|---|
| *Ա. 1 - 101* | *1950 - 52 թթ.* |
| *Բ. 102 - 200* | *1960 - 63 թթ.* |
| *Գ. 201 - 300* | *1964 - 72 թթ.* |
| *Դ. 301- 400* | *1973 - 76 թթ.* |
| *Ե. 401 - 500* | *1976 - 80 թթ.* |
| *Զ. 501 - 600* | *1980 - 84 թթ.* |
| *Է. 601 - 700* | *1985 - 89 և 1995 թթ.:* |

*Ամսագրի սույն համարից սկսում ենք հրատարակել ձեռագրատան նոր ստացած մատյանների հերթական՝ ութերորդ ցուցակը՝ նպատակ ունենալով հայագետների և մասնագետների լայն շրջանակների ուշադրությանը հանձնել այն:*

*Ստացված են 9 կոնդակներ Մայր Աթոռի դիվանատնից, 2 հատ՝ Մայր Աթոռի արխիվից, 5 հատ էլ՝ կանայան անձերից, որով ընդամենը՝ 16 հատ:*

*Ալեք և Մարի Մանուկյան Գանձատնից ստացված են կանայան 5 ձեռագրեր:*

*Զանայան բովանդակության 11 ձեռագիր մատյաններ ձեռք են բերված Մայր Աթոռի արխիվից:*

*«Էջմիածին» ամսագրի խմբագրության արխիվից ստացված են հայագետ-բանասեր Հակոբ Ճ. Սիրունու 14 ձեռագիր գործերը (Նո. 767-780):*

*Մի շարք ձեռագրեր գնված են կանայան անհատներից Մայր Աթոռի կողմից:*

*Բազմաթիվ ձեռագրեր նվեր են ստացված այստեղ՝ հայրենիքում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրներից:*

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

*1. Լենինականից Իսկուհի Տեր-Մկրտչյանը նվիրել է 16-17-րդ դդ. մի ժամագիրք (715):*

*2. Մրգաստան գյուղից (Էջմիածնի շրջան) Խաչիկ Ավագյանը նվիրել է 1912 թ. ռուսերեն մի պայմանագիր տեղի եկեղեցու նորոգության մասին (725):*

*3. Երևանից Հովհաննես Էնիկոլոպովը նվիրել է 2 կոնդակ (715 և 752):*

*4. Երևանից Ասպետ Արիստեկյանը նվիրել է մի կոնդակ (755):*

*5. Երևանից Սալոմե Տեր-Զաքարյանը նվիրել է մի քարտեզ (759) և Հոգևոր Ճեմարանի մի վկայագիր (760):*

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

*1. Լոնդոնից Լորիս Ճգնավորյանը նվիրել է եվրոպական ձայնանիշերով գրված կանական ժամագրքեր, շարականոցներ, Ս. Պատարագ և այլն, թվով 10 հատ (701-710):*

*2. Ստամբուլից նախկին քահանա Շավարշ Պալըմյանը ուղարկել է մի ձեռագիր «Դարապատում» անունով (714):*

*3. Բուխարեստից Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանից ստացված է Ս. Պատարագի մի խորհրդատետր (716):*

*4. Ստամբուլից Սիրվարդ Կյուպենկյան-Գունտաքճյանը նվիրել է մի ժամագիրք (747):*

*5. Ստամբուլից հանգուցյալ Սերովբե Սիրունյանի ընտանիքից ստացված է մեղեդիք և տաղարան (748):*

*6. Դետրոյտից Սիրանուշ Սարչյանը նվիրել է մի հմայիլ (758):*

*7. Փարիզից Մայր Աթոռի բարերար Կարպիս-Ռոժե Ջրբաշյանը նվեր է ուղարկել արժեքավոր մի Ավետարան 1660 թ. (787):*

*8. Լիոնից Սիմա Ուպունյանից ստացված է 16-17-րդ դդ. արժեքավոր երեք շարականոցներ (788-790):*

*9. Սիդնեյից Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանը նվեր է ուղարկած չորս ձեռագրեր՝ աղոթագիրք (791), վկայություն Աստվածաշունչ գրոց (792), դավանաբանական ճառեր (793) և մի տաղարան (794):*

*10. Սիդնեյից Արշակ Գալստյանը հետը նվեր է բերել Մայր Աթոռ՝ Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արժեքավոր ձեռագիր 5 մատյանները (797-801):*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից հատուկ շնորհակալություն այս բոլոր նվիրատուներին:*

*Մայր Աթոռի ձեռագրատան հավաքածուն այսօր հասել է շուրջ հազար միավորի՝ մատյաններն ու պատառիկները միասին հաշված: Շուրջ 16 դարեր առաջ Ս. Մեսրոպ-Մաշտոց վարդապետի օրով Ս. Էջմիածնում հաստատված Մայր Աթոռի ձեռագրատունը հանդիսանում է հայերեն և օտար լեզուներից բաղկացած հայկական առաջին ձեռագրատունը, իսկ աշխարհում՝ ամենահնագույններից մեկը: Մեր պարտքն է՝ հավաքել այստեղ Միածնաէջ Ս. Էջմիածնում՝ աշխարհացրիվ եղած հատկապես հայերեն ձեռագրերը, պարզապես դրանք փրկելու առհավետ, ապահովությամբ պահպանելու և Մայր Աթոռի պաշտոնաթերթում պարբերաբար տալու դրանց նկարագրությունը:*

*Հանուն Վեհափառ Հայրապետի մի անգամ ևս սրտագին կոչ ենք անում մեր Եկեղեցու բոլոր հոգևորականներին ու հավատացյալ ժողովրդին, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, հարստացնելու համար Մայր Աթոռիս ձեռագրատունն իրենց նվերներով, որոնք վերջնական ապահով տեղը գտնելու են Ս. Էջմիածնի հովանու ներքև:*

**Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
**Ձեռագրատան վարիչ**

№ 701
Ս. ՊԱՏԱՐԱԳ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 178: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թերթերն անջատ են, միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,8×21,2×1,7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բաց կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական մաքուր սպիտակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 16 Օգոստոսի 1976 թ.: -ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրին:/*

*Թ. 1ա. - Ձայնագրեալ Երգեցողութիւն Սրբոյ Պատարագի:*
*Թ. 37ա. - Վասն լուր աւուրց:*
*Թ. 74ա. - Մեղեդիք:*
*Թ. 96ա. - Այլելուիայք ձաշու աւետարանաց:*
*Թ. 91ա. - Ծննդեան առաջին աւուրն:*
*Թ. 107ա. - Հոգեգալստեան:*
*Թ. 110ա. - Վերափոխման Աստուածածնի:*
*Նաւատակեաց Ս. Խաչին:*
*Վերացման Ս. Խաչին:*
*Թ. 111ա. - Շողակաթի:*
*Մարտիրոսաց ըստ ձայնի:*
*Թ. 113ա. - Հրեշտակապետաց:*
*Մարգարէից:*
*Թ. 114ա. - Դաւթի և Յակովբայ: Հայրապետաց և վարդապետաց:*
*Ճգնաւորաց:*
*Թ. 115ա. - Կուսանաց:*
*Թագաւորաց:*
*Թ. 116ա. - Այգուց մեռելոց: Սրբասացութիւնք:*
*Թ. 122ա. - Յաւուրս Պահոց:*
*Աւագ հինգշաբթի:*
*Թ. 137ա. - Վասն Մեծի Պահոց:*
*Թ. 151 ա. - Յորժամ եպիսկոպոսն պատարագիցէ:*
*Թ. 161ա. - Յաւելուած, քարոզ մկրտութեան ՅՍ.ՔՍ /ի/:*
*Թ. 167ա. - Տաղ:*
*Թ. 168ա. - Քարոզ ոտնալուայի:*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 178ա. - Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգէնի*
*Սրբազնագոյն Կաթողիկոսի:*
*16 - VIII - 1976 թ.*
*Մասիս Վ(արդապետ)*
*Մանչեստր:*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Ս. Պատարագ*
*(Մատյանի սկզբի պահպանակի վրա գրված է)*
*Նորին Սուրբ Օծութիւն*
*Տ. Տ. Վազգէն Ա.*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց:*
*Մեծ սիրով եւ յարգանքով.*
*Լ. Զ. Ճգնաւորեան*
*Երեւան ... 7/(19)77:*
*Ձայնագրեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի.*
*1978:*

### № 702
### ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 43: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,8×21,2×0,6 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում երկուական մաքուր սպիտակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 29 Նոյեմբերի 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրին:/*

*Թ. 1ա. - Երեկոյեան Ստեղիք Մեծի Պահոց եւ այլ Եկեղեցական հոգեւոր երգք:*

*Վաղարշապատ*
*1899:*

### *ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*29 - XI - (19)76 թ. վերջ:*
*Մասիս Վ(արդապետ)*

### *ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Երեկոյեան ստեղիք մեծի պահոց:*
*(Սկզբի 2-րդ պահպանակի թիկունքին գրված է)*
*Մեր սիրելի Վեհափառին*
*Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց:*
*Լ. Ջ. Ճգնաւորեան*
*Երեւան 7/(19)77:*

### № 703
### ՔԱՀԱՆԱՅԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 11: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,8×21×0,2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում երկուական մաքուր սպիտակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միսյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 2 Նոյեմբերի 1976 թ.: -ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/*

*Թ. 1ա. – Քահանա(յ) ձեռնադրութեան երգեր:*

*Թ. 2ա. – Կարգ ձեռնադրութեան:*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 11ա. – Վերջ.* *2 - XI - (19)76 թ.*
*Մասիս Վ(արդապետ)*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Երգեր քահանայից ձեռանդրութեան:*
*Թ. 1ա. - Նուէր Նորին Սուրբ Օծութիւն*
*Տ. Տ. Վազգէն Ա.*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց,*
*Խորին երախտագիտութեամբ.*
*Լ. Զ. Ճգնաւորեան*
*Երեւան 7/(19)77:*

## № 704
## ԺԱՄԱԳԻՐՔ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 205: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,8×21×2,2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական մաքուր սպիտակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 20 Հոկտեմբերի 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերված 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/*

*Թ. 1ա. - Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.*

*Ի Վաղարշապատ*
*1877 - ՌՅԻԷ*


*Թ. 2ա. - Երգք ձայնագրեալք ի ժամագրոց:*
*Թ. 30ա. - Ի հասարակ աւուրս:*
*Թ. 39ա. - Ի հասարակ կիրակէս:*
*Թ. 43ա. - Ի կիրակէս Մեծի Պահոց:*
*Թ. 46ա. - Յաւուրս ուրբաթու և ի տօնս Խաչի:*
*Թ. 58ա. - Յաւուրս տօնս:*
*Թ. 88ա. - Կանոնագլուխք ի պէտս հասարակ աւուրց:*
*Թ. 107ա. - Կանոնագլուխ բուն բարի և Ս. Կիրակէի:*
*Աւագ ուրբաթի:*
*Թ. 123ա. - Սաղմոս Աւետարանի պկնի Այսօր ամէն...:*
*Թ. 130ա. - Մեծի ուրբաթուն:*
*Թ. 137ա. - Յոտնալուային:*
*Թ. 149ա. - Սաղմոսք. բստ ութ ձայնից:*
*Թ. 169ա. - Յարութեան:*
*Ծաղկազարդի և համբարձման:*
*Թ. 172ա. - Վերափոխման:*
*Թ. 175ա. - Մարգարէից:*
*Թ. 176ա. - Մարտիրոսաց:*
*Վասն պաշտօնէի:*
*Թ. 177ա. - Քահանայից:*
*Քարոզք վասն հանդիսաւոր աւուրց:*
*Թ. 184ա. - Ի պէտս հասարակ աւուրց:*
*Թ. 191ա. - Թագաւորք ապաշխարութեան:*


## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 2ա. 20 - X - (19)76 թ.*
*Մանչեստր. Մասիս վ(արդապետ)*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Երգք ի ժամագրոց*
I:

*(Սկզբի պահպանակի թիկունքին գրված է)*
*Նուէր Նորին Սուրբ Օծութիւն*
*Տ. Տ. Վազգէն Ա.*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց,*
*խորին երախտագիտութեամբ.*
*Լ. Զ. Ճգնաւորեան*
*Երեւան, հուն. 7/(19)77:*

**№ 705**

**ԺԱՄԱԳԻՐՔ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 260: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,9×21×2,5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մաքուր սպիտակ մի թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 16 Նոյեմբերի 1976 թ.: -ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/*

*Թ. 1ա. - Թագաւորք մարտիրոսաց:*
*Թ. 7ա. - Առաքելոց և մարգարէից:*
*Թ. 16ա. - Այէլուք Ճրագալուցի:*
*Թ. 26ա. - Ի վերափոխման Ս. Աստուածածնի:*
*Թ. 28ա. - Քառասնօրեայ գալստեան:*
*Թ. 29ա. - Խաչի:*
*Թ. 34ա. - Ի Ղազարու Յարութեան:*
*Թ. 35ա. - Ծաղկազարդի:*
*Թ. 36ա. - Աւագ շաբաթուն*
*Թ. 48ա. - Համբարձման Քրիստոսի:*
*Թ. 54ա. - Հոգւոյն Ս. Գալստեան:*
*Թ. 60ա. - Վարդավառի:*
*Թ. 70ա. - Ի տօնի Ս. Էջմիածնի:*
*Թ. 72ա. - Ի տօնի Եկեղեցւոյ:*

*Թ. 77ա. - Հրեշտակապետաց:*
*Թ. 82ա. - Ի հասարակ Կիւրակէս:*
*Թ. 83ա. - Ս. Էջմիածնի:*
*Թ. 86ա. - Երգ Իւղաբերից աւետարանին:*
*Թ. 91ա. - Վասն հասարակ կիւրակէից Յարութեան:*
*Թ. 93ա. - Վասն Կիւրակէից Մեծի Պահոց:*
*Թ. 95ա. - Ի հանդիսաւոր աւուրս:*
*Թ. 98ա. - Հասարակ աւուրց:*
*Թ. 100ա. - Առաւօտու երգք յարութեան:*
*Թ. 101ա. - Համբարձման:*
*Հոգեգալստեան:*
*Թ. 104ա. - Ծաղկազարդի:*
*Թ. 106ա. - Տապանակի:*
*Վարդավառի:*
*Թ. 107ա. - Աստուածածնի:*
*Խաչի:*
*Հրեշտակապետաց:*
*Թ. 108ա. - Առաքելոց:*
*Մարգարէից:*
*Հայրապետաց:*
*Թ. 109ա. - Մարտիրոսաց:*
*Ստեփանոսի:*
*Ծննդեան:*
*Թ. 110ա. - Ի քարոզի Կիւրակէից և 3 քհնյից.:*
*Թ. 111ա. - Վասն մեծի Պահոց:*
*Կուսանաց, առաքելոց, Մարգարէից:*
*Թ. 123ա. - Ըստ պատշաճի աւուրց:*
*Գալստեան և Ծաղկազարդի:*
*Թ. 124ա. - Աւագ ուրբաթու գիշերին (և 5 այլ օրվա համար):*
*Թ. 125ա. - Վարդավառի (և 2 այլ օրվա համար):*
*Թ. 127ա. - Կիւրակէի մեծի պահոց (նաև թ. 130ա):*
*Թ. 131ա. - Անդաստանաց:*
*Թ. 145ա. - Վասն հասարակ աւուրց:*
*Թ. 146ա. - Ի հանդիսաւոր աւուրս:*
*Թ. 147ա. - Սաղմոսք:*
*Թ. 218ա. - Արևագալի ժամու:*
*Թ. 235ա. - Հանդիսաւոր աւուրց (և 2 այլ օրվա համար):*
*Թ. 236ա. - Հոգեգալստեան (և 2 այլ օրվա համար):*
*Թ. 238ա. - Խաչի (և 6 այլ օրվա համար):*
*Թ. 239ա. - Մեծի պահոց յեկեղեցիս.:*
*Թ. 240ա. - Յերեկոյի մեծի ուրբաթու:*
*Թ. 242ա. - Ծաղկազարդի:*
*Ճրագալուցի:*
*Թ. 243ա. - Խաղաղականի:*
*Թ. 251ա. - Հանգստեան:*
*Թ. 254ա. - Ձայնագրեալ Սաղմոսք:*
*Թ. 256ա. - Սաղմոսք աւետարանաց:*

*ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Թ. 260ա. - Ձայնագրեալ ժամագիրք*
*16- XI - (19)76 թ.*
*Մասիս վ(արդապետ)*

*ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Երգք ի ժամագրոց*
*Ⅱ:*

**№ 706**
**ԺԱՄԱԳԻՐՔ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 358 – ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: – ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,9×21×3,6 սմ: – ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: – ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: – ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մաքուր սպիտակ երկու թուղթ: – ՎԻՃԱԿԸ՝ լավ: – ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: – ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: – ՏՈՂԵՐԸ՝ 12: – ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: – ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: – ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: – ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: – ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1976 թ.: –ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: – ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/*

*Թ. 1ա. – Օրհնութիւնք Պահոց:*
*Թ. 86ա. – Օրհնութիւնք համօրէն Մարտիրոսաց:*
*Թ. 87ա. – Օրհնութիւնք համօրէն Մարտիրոսաց:*
*Թ. 151ա. – Օրհնութիւնք համօրէն ննջեցելոց:*
*Թ. 211ա. – Քաղուածք օրհնութեան Աւետեաց Ս. Աստուածածնի:*
*Թ. 220ա. – Քաղուածք օրհ. Ս. աւուր Ծննդեան:*
*Թ. 263ա. – Վերջ ձայն քառանօրեայ գալստեան:*
*Թ. 270ա. – Քաղուածք Անտօնի անապատականի:*
*Թ. 280ա. – Քաղուածք օրհնութեան Դաւթի մարգարէին:*
*Թ. 287ա. – ՍրբոյնՍտեփանոսի Նախավկային:*
*Թ. 298ա. – Որդւոցն Որոտման:*

*Թ. 304ա. – Համօրէն առաքելոց:*
*Թ. 321ա. – Բուն Բարեկենդանի:*
*Թ. 331ա. – Բ. Կիւրակէին աղուհացից:*
*Թ. 337ա. – Կիւրեղի Երուսաղէմի հայրապետին:*
*Թ. 341ա. – Գ. Կիւրակէի աղուհացից:*
*Թ. 344ա. – Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին:*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Թաշճեան*
*(քաղուածք)*
*I:*
*(Սկզբի պահպանակի վրա գրված է)*
*Թաշճեան Քաղուածք*
*I:*
*(Սկզբի 2-րդ պահպանակի թիկունքին գրված է)*
*Նւէր Նորին Սուրբ Օծութիւն*
*Տ. Տ. Վազգէն Ա.*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց*
*Մեծ սիրով և յարգանքով,*
*Լ. Զ. Ճգնաւորեան:*
*Երևան 7/ (19)77:*

## № 707
## ԺԱՄԱԳԻՐՔ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 338 - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,8×21×3,5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մաքուր սպիտակ մի թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 19 Հոկտեմբերի 1976 թ.: -ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977*

*թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/*


*Թ. 1ա. - Հինգերորդ Կիւրակէի աղուհացից:*
*Թ. 5ա. - Վեցերորդ շաբաթու Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին*
*Թ. 6ա. - Վեցերորդ Կիւրակէի աղուհացից:*
*Թ. 16ա. - Օրհ. Է. Կիւրակէի Ծաղկազարդի Աւուր:*
*Թ. 21ա. - Քաղ. օրհ. Մեծի երկուշաբթի աւուր:*
*Թ. 32ա. - Մեծի Չորեքշաբթի աւուրն:*
*Թ. 49ա. - Քաղուածք օրհ. սրբոյ Զատկի:*
*Թ. 53ա. - Քաղուածք օրհնութեան մեռելոց երկուշաբթի աւուր:*
*Թ. 58ա. - Երկուշաբթի աւուր:*
*Թ. 64ա. - Չորեքշաբթի աւուր:*
*Թ. 68ա. - Հինգշաբթի աւուրն:*
*Թ. 73ա. - Ուրբաթի աւուր:*
*Թ. 78ա. - Շաբաթի աւուր:*
*Թ. 87ա. - Համբարձման Քրիստոսի:*
*Թ. 93ա. - Երկրորդ Ծաղկազարդ:*
*Թ. 97ա. - Պենտէկոստէի Ա. աւուրն:*
*Թ. 103ա. - Բ. աւուր Պենտէկոստէի:*
*Թ. 107ա. - Գ. աւուր Պենտէկոստէի:*
*Թ. 112ա. - Օրհ. Դ. աւուր:*
*Թ. 117ա. - Ե. աւուր:*
*Թ. 122ա. - Զ. աւուր:*
*Թ. 127ա. - Քաղուածք օրհ. Է. աւուր:*
*Թ. 131ա. - Ծննդեան Յովհաննու Մկրտչի:*
*Թ. 133ա. - Գլխատումն Յովհաննու Մկրտչի:*
*Թ. 138ա. - Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի:*
*Թ. 143ա. - Ս. Ներսեսի հայրապետին:*
*Թ. 149ա. - Ս. Հռիփսիմեանց:*
*Թ. 150ա. - Սրբոյ Տապանակի:*
*Թ. 156ա. - Վարդավառի Ա. աւուր:*
*Թ. 161ա. - Երկրորդ աւուր:*
*Թ. 165ա. - Գ. աւուր:*
*Թ. 171ա. - Օրհ. Շողակաթի:*
*Թ. 176ա. - Վերափոխման Ս. Աստուածածնի Ա. աւուր:*
*Թ. 189ա. - Քաղց. օրհ. Բ. աւուր:*
*Թ. 193ա. - Քաղ. օրհ. Գ. աւուր:*
*Թ. 199ա. - Նաւակատեաց սրբոյ Խաչին:*
*Թ. 205ա. - Քաղ. օրհ. Բ. աւուր:*
*Թ. 212ա. - Քաղ. օրհ. Դ. աւուր:*
*Թ. 221ա. - Քաղ. օրհ. Զ. աւուր:*
*Թ. 226ա. - Քաղ. օրհ. Է. աւուր:*
*Թ. 232ա. - Քաղ. օրհ. Ը. աւուր:*
*Թ. 236ա. - Քաղ. օրհ. Վարագայ Խաչի:*
*Թ. 242ա. - Քաղ. օրհ. Գիւտ Խաչին:*

*Թ. 246ա. - Սրբոց մարգարէից:*
*Թ. 252ա. - Սրբոց թարգմանչաց:*
*Թ. 258ա. - Յակոբայ Մծբնայ Հայրապետին:*
*Թ. 263ա. - Հրեշտակապետաց:*
*Թ. 269ա. - Սրբոց Հայրապետաց:*
*Թ. 275ա. - Սրբոց Ղեւոնդեանց:*
*Թ. 281ա. - Ս. Գէորգայ Զօրավարին:*
*Թ. 288ա. - Շարականք անդաստանաց:*
*Թ. 290ա. - Տեառընդառաջի առաւօտուն:*
*Թ. 291ա. - Վասն Չորից աւետարանացն:*
*Թ. 296ա. - Ծաղկազարդի առաւօտուն:*
*Թ. 297ա. - Առաւօտեան և Երեկոյեան անդաստանի:*
*Թ. 300ա. - Ճրագալուցի Ս. Զատկի:*
*Թ. 304ա. - Զատկի երեկոյեան:*
*Թ. 306ա. - Նոր Կիւրակէ:*
*Թ. 307ա. - Աշխարհամատրան Կիւրակէի:*
*Թ. 308ա. - Չորրորդ Կիւրակէի: Երեւման Ս. Խաչի:*
*Թ. 309ա. - Երեկոյեան Անդաստանի: Վեցերորդ Կիւրակէի:*
*Թ. 310ա. - Համբարձման առաւօտուն:*
*Թ. 311ա. - Առաւօտեան Անդաստանին:*
*Թ. 312ա. - Երեկոյեան անդաստանին: Բ. Ծաղկազարդ:*
*Թ. 313ա. - Առաւօտեան Անդաստանին:*
*Թ. 314ա. - Ս. Գայիանեան:*
*Թ. 315ա. - Առաւօտեան Անդաստանին:*
*Թ. 316ա. - Պատարագին:*
*Թ. 320ա. - Նախ քան պաղօթս Լամբրոնացւոյն:*
*Թ. 321ա. - Ի տօնի Կաթուղիկէ եկեղեցւոյ:*
*Թ. 323ա. - Առաւօտեան Անդաստանի: Երեկոյեան Անդաստանին:*
*Թ. 325ա. - Վերափոխման Ս. Աստուածածնի: Առաւօտեան և Երեկոյեան Անդաստանին:*
*Թ. 327ա. - Վերացման Ս. Խաչի: Առաւօտեան Անդաստանին:*
*Թ. 328ա. - Ի ժամ Խաչվերացի:*
*Թ. 333ա. - Ի մտանելն յեկեղեցին պայս ետես:*
*Թ. 334ա. - Վասն մեռելոցի:*
*Թ. 336ա. - Օրհ. Հրեշտակապետաց:*

*ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Թ. 338ա. - Վերջ*
*19 - X - (19)76 թ. վերջ:*
*Մ(ասիս) Վ(արդապետ)*

*ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*(Կազմի առաջին երեսին գրված է)*
*Թաշճեան*
*(քաղուածք)*
**II:**
*(Սկզբի պահպանակի վրա գրված է)*
*Թաշճեան: Քաղուածք.* **II:**

*(Շարունակելի)*

**Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**